ՄԻԱՆՁԱՆԱԿ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի կուսակցական ապարատի սկզբնական կազմակերպության կոմունիստները իրենց վերաբերմունքը ձևակերպեցին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման նկատմամբ:

Ելույթ ունենալով կուսակցական ժողովում, ապարատի պատասխանատու աշխատողներ Էդվարդ Պետրոսյանը, Վասիլի Ավետիսյանը, Ծուրի Սահակյանը, Վալերի Ղազարյանը, Արկադի Պողոսյանը, Վալերի Դրիգորյանը և մյուսները նշում էին, որ բնդունված որոշումը ինքնադատության չի դիմանում ոչ բարոյական, ոչ էլ իրավաբանական տեսակետից, քանի որ նախ նոտայրջանը մոռացության է մատնել ԼՂԻՄ-ի վերաբերյալ հանձնաժողովի նետևությունները ու առաջարկությունները, և երկրորդ, որոշման բովանդակությունը հակասում է ինքնավար մարզի հայ բնակչության իղձերին և արմատապես հակասում ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքին: Քաղաքակիրթ պետությանը վայել չէ նման միջոցներով լուծել ազգային հարցերը: Փաստորեն Արցախի ժողովուրդը խաբված է կենտրոնական իշխանությունների կողմից, որոնք գրեթե երկու տարի շարունակ խոստանում էին հաշվի առնել նրա շահերը, մինչդեռ իրականում բավարարեցին հայերի նկատմամբ ագրեսիվ տրամադրված Ադրբեջանի ժողովրդական ճակատի պահանջները: Նմանօրինակ որոշումը ոչ միայն չի նպաստում ռեգիոնի ազգամիջյան իրադրության կարգավորմանը, այլև ֆեոդալական լարվածության հետագա սաստկացման հենց թեկուզ այն պատճառով, որ այն ընդունվեց հապճեպ, տարրական արարողակարգերի նորմերի խախտումով՝ հայ պառլամենտականների թիկունքի հետևում:

Ժողովի մասնակիցները իրենց վրդովմունքը արտահայտեցին այն բանի դեմ, որ փաստաթղթում քաղաքական գնահատական չի տրված Ադրբեջանի ժողովրդական ճակատի և հանրապետության ղեկավարության հակամարդկային գործողություններին, որոնք հանգեցնում են մարդկանց ֆիզիկական բնաջնջման նրանց ազգային պատկանելիության պատճառով, հայերի ջարդերի, նրանց բռնի տեղահանությանը իրենց բնակության վայրերից, Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ-ի շրջափակմանը: Ելնելով սրանից, ժողովը երկրի Գերագույն խորհրդի որոշումը համարեց անընդունելի և անիրագործելի:

Ժողովի որոշման մեջ նաև ասվում է, որ իրականացվող հակահայկական քաղաքականության դեմ որպես բողոք ԽՄԿԿ-ի շարքերից կամավոր դուրս գալու որոշ անձանց կոչերը սխալ են ու վնասակար, քանի որ դրանք ձեռնտու են ժողովրդական ճակատին և Ադրբեջանի ազգայնականորեն տրամադրված ղեկավարությանը, որոնք ձգտում են լուծարել հայկական ինքնավար կազմավորումը: Ժողովրդի համար այսչափ ծանր պահին ավելի քան երբևէ անհրաժեշտ է մարզի բնակչության բոլոր ուժերի, կոմունիստների և անկուսակցականների համախմբումը՝ շարունակելու համար պայքարը հանուն Ղարաբաղի խնդրի արդարացի լուծման:

Ժողովը նպատակահարմար գրտավ կուսակցության Ստեփանակերտի քաղկոմին խնդրել հերթական պլենում քննարկել ստեղծված իրադրության մեջ քաղաքային կուսկազմակերպության անելիքները, Լեռնային Ղարաբաղի բնակչության հայկական մասի արդարացի պահանջի իրականացման համար ծավալված պայքարում յուրաքանչյուր կոմունիստի հետագա գործողությունները որոշելու համար, ինչպես նաև քննարկել Հայաստանի կուսակցական կազմակերպության մեջ քաղաքային կուսկազմակերպության մտնելու հարցը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ